
ԽՈՒՄԲ 1

164 հարց

DT կարգեր · տեսական հարցաշար

1. Նշաններից ո՞րն է կոչվում «Արգելքի շրջանցումը ձախից»:




1. 1
2. 2
3. **3**
4. 4
5. 5

Պատ.՝ 3

---

2. Թույլատրվու՞մ է արդյոք ավտոբուսի վարորդին մուտք գործել խաչմերուկ տվյալ իրադրությունում:




1. Թույլատրվում է
2. **Արգելվում է**
3. Թույլատրվում է, եթե ավտոբուսը երթեւեկում է սահմանված երթուղով

Պատ.՝ 2

---

3. **Նշված դեպքում ո՞ր գոտուց պետք է կատարվի աջ շրջադարձը:**



1. Միայն երկրորդ գոտուց
2. **Միայն «A» գծանշումով նշված աջ եզրային գոտուց**

Պատ.՝ 2

---

4. **Խաչմերուկում կազմակերպված է շրջանաձև երթեւեկություն: Երթեւեկելի մասը, որով մոտենում եք խաչմերուկին, ունի երթեւեկության երկու գոտի: Խաչմերուկ մուտք գործելիս՝ շրջադարձ կատարելու համար ո՞ր գոտին եք պարտավոր զբաղեցնել:**

1. Աջ գոտին
2. Ձախ գոտին
3. **Կա՛մ աջ, կա՛մ ձախ գոտին**

Պատ.՝ 3

---

5. **Երկկողմ երթեւեկությամբ գծանշված ճանապարհներին, երեք գոտու առկայության դեպքում (բացառությամբ երթեւեկության դարձափոխային կարգավորմամբ ճանապարհների), որոնցից միջինն օգտագործվում է երկու ուղղություններով երթեւեկության համար, ձախ եզրային գոտի մուտք գործելը**

1. Թույլատրվում է:
2. **Արգելվում է:**
3. Թույլատրվում է՝ միայն վազանցի, շրջանցման, ձախ շրջադարձի կամ հետադարձի համար:

Պատ.՝ 2

---


6. **Հետադարձն արգելվում է**

1. Հետիոտնային անցումների վրա:
2. Թունելներում:
3. Կամուրջների, ուղեկամուրջների, Էստակադների վրա եւ դրանց տակ:
4. Երկաթուղային գծանցներում:
5. **Թվարկած բոլոր դեպքերում:**

Պատ.՝ 5

---

7. Թույլատրվու՞մ է դեղին ավտոբուսի վարորդին մուտք գործել խաչմերուկ:



1. Թույլատրվում է
2. **Արգելվում է**
3. Թույլատրվում է, եթե ավտոբուսը երթեւեկում է սահմանված երթուղով

Պատ.՝ 2

---

8. Հետադարձն արգելվում է, եթե ճանապարհի թեկուզ եւ մեկ ուղղությամբ տեսանելիությունը պակաս է

1. **100 մ-ից:**
2. 150 մ-ից:
3. 300 մ-ից:

Պատ.՝ 1

---

9. Դուք երթեւեկում եք երեք գոտի ունեցող երկկողմ երթեւեկությամբ ճանապարհով: Ո՞ր դեպքում է թույլատրվում մուտք գործել միջին գոտի:

1. Միայն վազանցի դեպքում
2. Միայն շրջանցման դեպքում
3. Միայն ձախ շրջադարձի կամ հետադարձի դեպքում
4. **Թվարկած բոլոր դեպքերում**

Պատ.՝ 4

---


10. Ճանապարհային նշանների, գծանշման եւ բաժանարար գոտու բացակայության դեպքում վարորդները երկկողմ երթեւեկությամբ ճանապարհների երթեւեկելի մասում գտնվող ճանապարհային կառույցների տարրերը պետք է շրջանցեն

1. **Աջ կողմից:**
2. Ձախ կողմից:

Պատ.՝ 1

---

11. **Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդն է խախտում կանոնները շրջադարձ կատարելիս՝ արգելակման գոտի ունեցող ճանապարհին:**



1. Երկու վարորդներն էլ
2. **Դեղին ավտոմոբիլի վարորդը**
3. Երկու վարորդներն էլ շրջադարձը կատարում են ճիշտ

Պատ.՝ 2

---

12. **Թույլատրվու՞մ է արդյոք տվյալ իրադրությունում կարմիր ավտոմոբիլի վարորդին շարունակել երթեւեկությունը:**



1. Թույլատրվում է
2. **Արգելվում է**

Պատ.՝ 2

---


13. **Երեք գոտի ունեցող երկկողմ երթեւեկությամբ ճանապարհի վրա Ձեզ անհրաժեշտ է կատարել ձախ շրջադարձ: Ո՞ր գոտուց կկատարեք տվյալ մանեւրը:**

1. Աջ գոտուց
2. **Միջին գոտուց**
3. Աջ կամ միջին գոտուց
4. Միջին գոտուց, եթե զբաղեցված է աջ գոտին

Պատ.՝ 2

---

14. **Թույլատրվու՞մ է արդյոք կարմիր ավտոմոբիլի վարորդին երթեւեկել տրամվայի գծերով:**



1. **Թույլատրվում է**
2. Արգելվում է

Պատ.՝ 1

---


15. **Հետադարձն արգելվում է**

1. Հետիոտնային անցումների վրա եւ թունելներում:
2. Կամուրջների, ուղեկամուրջների, Էստակադների վրա եւ դրանց տակ:
3. Երկաթուղային գծանցներում:
4. Ճանապարհի՝ թեկուզ եւ մեկ ուղղությամբ 100 մ-ից պակաս տեսանելիության տեղերում:
5. **Բոլոր թվարկած դեպքերում:**

Պատ.՝ 5

---

16. **Ո՞ր ուղղություններով է թույլատրվում երթեւեկությունը:**



1. Միայն դեպի ձախ
2. **Ուղիղ, դեպի ձախ եւ հետադարձ**
3. Միայն ուղիղ

Պատ.՝ 2

---


17. **Համընթաց ուղղությամբ երթեւեկող տրանսպորտային միջոցների միաժամանակյա վերադասավորման դեպքում ճանապարհը պետք է զիջի**

1. **Ձախից ընթացող տրանսպորտային միջոցի վարորդը:**
2. Աջից ընթացող տրանսպորտային միջոցի վարորդը:

Պատ.՝ 1

---

18. **Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդն ունի առաջնահերթ երթեւեկության իրավունք:**




1. **Բեռնատար ավտոմոբիլի վարորդը**
2. Ավտոբուսի վարորդը

Պատ.՝ 1

---

19. **Պարտավո՞ր է արդյոք սահմանված երթուղով երթեւեկող ավտոբուսի վարորդը նշված իրադրությունում զիջել ճանապարհը:**



1. **Պարտավոր է**
2. Պարտավոր չէ
3. Պարտավոր չէ, քանի որ երթեւեկում է ուղիղ

Պատ.՝ 1

---

20. **Եթե համապատասխան նշաններով կահավորված, երկայնական թեքությամբ ճանապարհահատվածներում հանդիպակաց երթեւեկությունը դժվարացած է, ապա ճանապարհը պետք է զիջել**

1. Վայրէջքի ուղղությամբ ընթացող տրանսպորտային միջոցին:
2. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցին:
3. **Վերելքի ուղղությամբ ընթացող տրանսպորտային միջոցին:**

Պատ.՝ 3

---

21. **Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդը պետք է զիջի ճանապարհը:**



1. Տրակտորիստ-մեքենավարը
2. **Ավտոբուսի վարորդը**

Պատ.՝ 2

---

22. **Պարտավո՞ր են արդյոք տրանսպորտային միջոցների վարորդները բնակավայրերում ճանապարհը զիջել կահավորված եւ նշված կանգառի կետերի տարածքից երթեւեկությունը սկսող ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին:**

1. **Այո**
2. Ոչ

Պատ.՝ 1

---

23. **Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդը պետք է զիջի ճանապարհը:**




1. Ավտոբուսի վարորդը
2. **Ավտոմոբիլի վարորդը**

Պատ.՝ 2

---

24. Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդը պետք է զիջի ճանապարհը:




1. **Ավտոմոբիլի վարորդը**
2. Տրամվայի վարորդը

Պատ.՝ 1

---

25. Նշե՛ք խաչմերուկի անցման հերթականությունը



1. Ավտոբուսը, բեռնատար ավտոմոբիլը, լծասայլը:
2. **Ավտոբուսը եւ լծասայլը, բեռնատար ավտոմոբիլը:**

Պատ.՝ 2

---

26. **Հանդիպակաց երթեւեկության դեպքում կտրուկ վայրէջքի վրա անհրաժեշտ է ճանապարհը զիջել**

1. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցին:
2. **Վերեւ բարձրացող տրանսպորտային միջոցին:**
3. Ներքեւ իջնող տրանսպորտային միջոցին:

Պատ.՝ 2

---

27. **Բնակավայրերում միեւնույն ուղղությամբ երթեւեկության 3 եւ ավելի գոտիների առկայության դեպքում ձախ եզրային գոտի զբաղեցնել թույլատրվու՞մ է արդյոք ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին:**

1. Թույլատրվում է՝ վազանց կատարելիս
2. **Թույլատրվում է՝ ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելիս**
3. Թույլատրվում է բոլոր դեպքերում

Պատ.՝ 2

---

28. **Բոլոր ճանապարհներին միեւնույն ուղղությամբ երթեւեկության 3 եւ ավելի գոտիների առկայության դեպքում ձախ եզրային գոտի զբաղեցնել թույլատրվու՞մ է արդյոք ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին:**

1. Թույլատրվում է՝ վազանց կատարելիս
2. **Թույլատրվում է ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելիս**
3. Թույլատրվում է բոլոր դեպքերում

Պատ.՝ 2

---

29. **Ինչպե՞ս պետք է վարվի երթուղային ավտոբուսի վարորդը տվյալ իրավիճակում:**



1. Ճանապարհը զիջի թեթեւ մարդատար ավտոմոբիլին
2. Միացնի շրջադարձի ցուցիչը, տա ձայնային ազդանշան եւ սկսի երթեւեկությունը
3. **Սկսի երթեւեկությունը՝ համոզված լինելով, որ թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդը զիջում է ճանապարհը**

Պատ.՝ 3

---

30. **Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդն ունի առաջնահերթ երթեւեկության իրավունք:**



1. **Թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդը**
2. Երթուղային ավտոբուսի վարորդը

Պատ.՝ 1

---

31. **Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդն ունի առաջնահերթ երթեւեկության իրավունք տվյալ իրավիճակում:**



1. **Ավտոբուսի վարորդը**
2. Թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդը
3. Թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդը իրավունք չունի անցնել աջ գոտի

Պատ.՝ 1

---

32. **Շրջանաձեւ երթեւեկությամբ խաչմերուկում ավտոբուսի վարորդը պարտավո՞ր է ճանապարհը զիջել բեռնատար ավտոմոբիլին:**



1. Պարտավոր է
2. **Պարտավոր չէ**

Պատ.՝ 2

---

33. Երթեւեկությունն ուղիղ շարունակող ավտոբուսի վարորդը պարտավո՞ր է ճանապարհը զիջել բեռնատար ավտոմոբիլին:



1. **Պարտավոր է**
2. Պարտավոր չէ

Պատ.՝ 1

---

34. Տվյալ իրադրությունում ունե՞ք արդյոք նշված մանեւրի իրավունք:



1. Այո
2. **Ոչ**

Պատ.՝ 2

---

35. Դուք շարունակում եք երթեւեկությունն ուղիղ: Ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:



1. Միայն թեթեւ մարդատար ավտոմոբիլին
2. Բեռնատար ավտոմոբիլին
3. **Երկու տրանսպորտային միջոցներին**
4. Ոչ մեկին

Պատ.՝ 3

---

36. Դուք շարունակում եք երթեւեկությունն ուղիղ: Պարտավո՞ր եք արդյոք զիջել ճանապարհը թեթեւ մարդատար ավտոմոբիլին:




1. Պարտավոր եք
2. **Պարտավոր չեք**

Պատ.՝ 2

---

37. Դուք սկսում եք երթեւեկել ճամփեզրից: Պարտավո՞ր եք արդյոք զիջել ճանապարհը թեթեւ մարդատար ավտոմոբիլին, որը կատարում է հետադարձ:



1. **Պարտավոր եք**
2. Պարտավոր չեք

Պատ.՝ 1

---

38. Դուք շարունակում եք երթեւեկությունն ուղիղ: Ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:



1. **Միայն թեթեւ մարդատար ավտոմոբիլին**
2. Ոչ մեկին
3. Միայն թեթեւ մարդատար ավտոմոբիլին եւ մոտոցիկլին
4. Բոլոր տրանսպորտային միջոցներին

Պատ.՝ 1

---

39. **Եթե մտադիր եք կատարել ձախ շրջադարձ, ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:**



1. Մոտոցիկլին
2. Պարեկային ավտոմոբիլին
3. **Բոլոր տրանսպորտային միջոցներին**

Պատ.՝ 3

---

40. **Եթե մտադիր եք խաչմերուկում կատարել հետադարձ, ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:**



1. Թեթեւ մարդատար ավտոմոբիլին
2. **Բոլոր տրանսպորտային միջոցներին**
3. Բեռնատար ավտոմոբիլին

Պատ.՝ 2

---

41. **Եթե մտադիր եք խաչմերուկում կատարել ձախ շրջադարձ, ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:**



1. Բեռնատար ավտոմոբիլին
2. **Բոլոր տրանսպորտային միջոցներին**
3. Ոչ մեկին

Պատ.՝ 2

---

42. **Եթե մտադիր եք խաչմերուկում կատարել հետադարձ, ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:**



1. **Բեռնատար ավտոմոբիլին**
2. Թեթեւ մարդատար ավտոմոբիլին
3. Բոլոր տրանսպորտային միջոցներին
4. Ոչ մեկին

Պատ.՝ 1

---

43. **Եթե մտադիր եք կատարել ձախ շրջադարձ, ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:**



1. Ավտոբուսին
2. Ավտոբուսին եւ թեթեւ մարդատար ավտոմոբիլին
3. Թեթեւ մարդատար ավտոմոբիլին
4. **Ոչ մեկին**

Պատ.՝ 4

---

44. **Եթե մտադիր եք կատարել աջ շրջադարձ, պարտավո՞ր եք արդյոք զիջել ճանապարհը թեթեւ մարդատար ավտոմոբիլին:**




1. Պարտավոր եք
2. **Պարտավոր չեք**

Պատ.՝ 2

---

45. Եթե մտադիր եք կատարել աջ շրջադարձ, ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:



1. Ոչ մեկին
2. Թեթեւ մարդատար ավտոմոբիլին
3. Մոտոցիկլին եւ թեթեւ մարդատար ավտոմոբիլին

Պատ.՝ 1

46. Պարտավոր ենք արդյո՞ք այս իրավիճակում զիջել հանդիպակաց գոտուց մոտեցող ավտոմոբիլի վարորդին:



1. Այո
2. Ոչ

Պատ.՝ 1

47. Այս իրավիճակում պարտավոր եք



1. Զիջել ճանապարհը:
2. Անցնել առաջինը:

Պատ.՝ 1

48. Տվյալ իրավիճակում



1. Կարող ենք շրջանցել բեռնատարին աջ կողմից՝ կողնակով:
2. **Շարունակել երթևեկությունը միայն բեռնատարի անցումից հետո:**
3. Երկու գործողություններն էլ թույլատրելի են:

Պատ.՝ 2

49. Այս իրավիճակում



1. Պետք է զիջել ճանապարհը:
2. **Կարող եք առաջինն անցնել:**

Պատ.՝ 2

50. Տվյալ իրավիճակում ուղիղ երթևեկելու դեպքում թույլատրվում է



1. Շրջանցել բեռնատարն աջ կողմից:
2. Շարունակել երթևեկությունը միայն բեռնատարի անցումից հետո:
3. **Նշված երկու դեպքերն էլ թույլատրելի են:**

Պատ.՝ 3

51. Այս իրավիճակում




1. Պարտավոր ենք զիջել ճանապարհը:
2. **Ունենք առաջնահերթ երթևեկության իրավունք:**

Պատ.՝ 2

---

52. Ո՞ր հետագծով է թույլատրվում մոտենալ մայթեզրում սպասող հետիոտնին:



1. Միայն A:
2. **Միայն B:**
3. Երկու հետագծերով էլ թույլատրվում է:

Պատ.՝ 2

---

53. Ո՞ր հետագծով է թույլատրված հետադարձը:



1. **Միայն A**
2. Միայն B
3. Երկու հետագծերով էլ թույլատրվում է:

Պատ.՝ 1

---

54. Հետադարձը նշված տեղում




1. Թույլատրվում է, եթե մոտեցող գնացք չկա:
2. **Թույլատրվում է:**
3. Արգելվում է:

Պատ.՝ 2

---

55. Ո՞ր հետագծով է թույլատրված աջ շրջադարձը:



1. **Միայն A**
2. Միայն B
3. Երկու հետագծերով էլ թույլատրված է:

Պատ.՝ 1

---

56. Նշված եղանակով հետադարձն այս խաչմերուկում



1. Թույլատրվում է:
2. **Չի թույլատրվում:**

Պատ.՝ 2

---

57. Ո՞ր հետագծով է թույլատրվում հետադարձը վարորդին:



1. Միայն A
2. **Միայն B**
3. Ցանկացած

Պատ.՝ 2

---

58. Աջ շրջադարձ կատարելիս դեպի աջ հարող ճանապարհ՝ անհրաժեշտ է



1. Շարունակել երթևեկությունն այս գոտով և շրջադարձը կատարել միայն այդ գոտուց:
2. **Վերադասավորվել արգելակման գոտի և շրջադարձը կատարել միայն այդ գոտուց:**
3. Երկու տարբերակներն էլ ճիշտ են:

Պատ.՝ 2

---

59. Հետադարձն այս խաչմերուկում



1. **Թույլատրված է:**
2. Արգելված է:

Պատ.՝ 1

---

60. **Թույլատրվա՞ծ է հետադարձն այս վայրում:**



1. Այո
2. **Թույլատրված է, եթե տեսանելիությունը 100 մետր և ավելի է**
3. Ոչ

Պատ.՝ 2

---

61. **Ո՞ր հետագծով է թույլատրված ձախ շրջադարձը**



1. Միայն A
2. **Միայն B**
3. Ցանկացած

Պատ.՝ 2

---


62. **Այն դեպքերում, երբ տրանսպորտային միջոցների երթևեկության ուղիները հատվում են, իսկ անցման հերթականությունը կանոններով սահմանված չէ, ճանապարհը պետք է զիջի այն վարորդը**

1. **Որին տրանսպորտային միջոցը մոտենում է աջից:**
2. Որին տրանսպորտային միջոցը մոտենում է ձախից:

Պատ.՝ 1

---

63. Ո՞ր վարորդը պետք է զիջի ճանապարհը:




1. **Սպիտակ ավտոմոբիլի վարորդը**
2. Դեղին ավտոմոբիլի վարորդը

Պատ.՝ 1

---

64. Հետադարձը նշված վայրում




1. Թույլատրվում է:
2. Թույլատրվում է, եթե չի խոչընդոտում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վարորդներին:
3. **Արգելվում է:**

Պատ.՝ 3

---

65. Ո՞ր հետագծով է թույլատրված ձախ շրջադարձը:




1. Միայն A
2. **Միայն B**
3. Ցանկացած

Պատ.՝ 2

---

66. Ո՞ր հետագծով է թույլատրված աջ շրջադարձը:



1. **Միայն A**
2. Միայն B
3. Ցանկացած

Պատ.՝ 1

---

67. Ո՞ր հետագծով է թույլատրված հետադարձը:




1. Միայն A
2. **A կամ C**
3. Բոլոր

Պատ.՝ 2

---

68. Պարտավո՞ր է վարորդը վերադասավորվել աջ գոտի և հետո միայն կատարել աջ շրջադարձն այս իրավիճակում:



1. Այո
2. **Ոչ**

Պատ.՝ 2

---

69. Գտնվելով կամրջի վրա՝ թույլատրվո՞ւմ է հետադարձը:




1. Թույլատրվում է, եթե տեսանելիությունը 100 մետր և ավելի է
2. Արգելվում է

Պատ.՝ 2

---

70. Մուտք գործել խաչմերուկ նշված գոտուց




1. Թույլատրվում է միայն հետադարձ կատարելիս:
2. Թույլատրվում է ցանկացած դեպքում:

Պատ.՝ 2

---

71. Թույլատրվա՞ծ է հետադարձն այս վայրում:



1. Այո
2. Թույլատրված է, եթե տեսանելիությունը 100 մետր և ավելի է
3. Ոչ

Պատ.՝ 2

---

72. Հետադարձն այս վայրում




1. **Թույլատրվում է:**
2. Արգելվում է:

Պատ.՝ 1

---

73. Ձախ շրջադարձը թույլատրվում է




1. Միայն A հետագծով
2. Միայն B հետագծով
3. **Ցանկացած հետագծով**

Պատ.՝ 3

---

74. Կայանատեղիից միաժամանակ երթևեկությունը սկսելու դեպքում պարտավո՞ր եք արդյոք զիջել ճանապարհը առջևում գտնվող վարորդին:



1. **Այո**
2. Ոչ

Պատ.՝ 1

---

75. Այս իրավիճակում վարորդը ո՞ր հետագծով իրավունք ունի կատարել ձախ շրջադարձ:



1. Միայն A
2. Միայն B
3. **Ցանկացած**

Պատ.՝ 3

---

76. Թույլատրվո՞ւմ է վարորդին այս իրավիճակում աջ շրջադարձ կատարել:



1. Այո
2. **Ոչ**

Պատ.՝ 2

---

77. Այս իրավիճակում կանգառ կատարելիս ո՞ր ազդանշանի լուսային ցուցիչը պետք է միացնի վարորդը:




1. Աջ
2. Աջ, վերադասավորումից հետո՝ ձախ
3. **Ձախ**

Պատ.՝ 3

---

78. **Նշեք այն հետագիծը (հետագծերը), որով թույլատրված է երթևեկությունը:**



1. Բոլոր
2. Միայն A
3. **Միայն A կամ C**

Պատ.՝ 3

---

79. **Տեսանելիության բացակայության պատճառով հետընթաց կատարելիս վարորդը պետք է**

1. Ձայնային ազդանշան տա:
2. Միացնի վթարային լուսային ազդանշանը:
3. **Դիմի այլ անձանց օգնությանը:**

Պատ.՝ 3

---


80. **Ո՞ր տարբերակում է թույլատրված հետընթացը:**

1. Խաչմերուկներում
2. **Աջ եզրային չհանդիսացող գոտիներում**
3. Հետիոտնային անցումներում

Պատ.՝ 2

---

81. **Տվյալ իրավիճակում թույլատրվու՞մ է վարորդին երթևեկել տրամվայի գծերով:**



1. Այո
2. Թույլատրվում է միայն հետադարձ կամ ձախ շրջադարձ կատարելու դեպքում
3. **Ոչ**

Պատ.՝ 3

---

82. Այս իրավիճակում ձախ շրջադարձ կատարելիս պարտավո՞ր է արդյոք վարորդը լուսային ցուցիչով ազդանշան տալ:




1. **Այո**
2. Այո, երբ առկա է հանդիպակաց երթևեկող
3. Պարտավոր չէ

Պատ.՝ 1

---

83. Ձախ շրջադարձ թույլատրվում է



1. Միայն A հետագծով:
2. **Միայն B հետագծով:**
3. Երկու հետագծերով:

Պատ.՝ 2

---

84. Թույլատրվու՞մ է հետադարձ կատարել այս իրավիճակում:



1. **Թույլատրվում է միայն ճանապարհի 100 մետրից ավելի տեսանելիության դեպքում**
2. Արգելվում է

Պատ.՝ 1

---


85. Բեռնատարի վարորդին ճանապարհը զիջել



1. Պարտավոր ենք:
2. Պարտավոր ենք, եթե նա այդ մասին ձեռքով ազդանշան է տվել:
3. **Պարտավոր չենք:**

Պատ.՝ 3


86. Ո՞ր հետագծով է թույլատրված հետադարձը:



1. **Միայն A**
2. Միայն B
3. Ցանկացած

Պատ.՝ 1


87. Ո՞ր հետագծով է թույլատրված հետադարձը:



1. **Ցանկացած**
2. Միայն B
3. Միայն A

Պատ.՝ 1

88. Այս գոտուց երթևեկությունը շարունակել թույլատրվում է



1. Միայն ձախ ուղղությամբ:
2. **Ձախ և հակառակ ուղղություններով:**
3. Աջ, ձախ և հակառակ ուղղություններով:

Պատ.՝ 2

---

89. Այս իրավիճակում, վերադասավորվելով հարևան գոտի,




1. **Պարտավոր եք զիջել նշված գոտով ընթացող վարորդներին:**
2. Ունեք երթևեկության առավելություն:

Պատ.՝ 1

---

90. Ո՞ր հետագծով է թույլատրված հետադարձը:




1. Միայն A
2. Միայն B
3. **Ցանկացած**

Պատ.՝ 3

---

91. Ո՞ր հետագծով է թույլատրված ձախ շրջադարձը



1. Միայն A
2. Միայն C
3. **Ցանկացած**

Պատ.՝ 3

---


92. Ինչպե՞ս պետք է վարվեք խաչմերուկից դուրս ձախ շրջադարձի և հետադարձի ժամանակ:

1. Պետք է ճանապարհը զիջել հանդիպակաց տրանսպորտային միջոցներին
2. **Պետք է ճանապարհը զիջել հանդիպակաց տրանսպորտային միջոցներին և համընթաց երթևեկող տրամվայներին**

Պատ.՝ 2

---

93. Երթևեկությունը սկսելիս պարտավո՞ր եք արդյոք զիջել ճանապարհը հետադարձ կատարող վարորդին:



1. **Այո**
2. Ոչ

Պատ.՝ 1

---


94. Այս իրավիճակում հետընթացով մոտենալ ուղևորին



1. Թույլատրվում է:
2. Թույլատրվում է, եթե չի խոչընդոտում այլ վարորդների երթևեկությանը:
3. Արգելվում է:

Պատ.՝ 3


95. Հետադարձն այս խաչմերուկում



1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:

Պատ.՝ 1

96. Ո՞ր ուղղությամբ է թույլատրված երթևեկությունը:



1. Միայն ձախ
2. Ուղիղ և ձախ
3. Ձախ և հետադարձ

Պատ.՝ 1

97. Պարտավո՞ր եք արդյոք միացնել աջ շրջադարձի ցուցիչն այս խաչմերուկում:



1. Այո
2. Ոչ
3. Այո, բացառությամբ հետադարձ կատարելիս:

Պատ.՝ 1

---

98. Մերձակա տարածք մուտք գործելիս վարորդը պետք է ճանապարհը զիջի

1. Միայն հետիոտներին:
2. Միայն հեծանվորդներին:
3. Հեծանվորդներին և չստեղծի խոչընդոտ հետիոտների համար:

Պատ.՝ 3

---

99. Մերձակա տարածքից դուրս գալիս վարորդը պետք է ճանապարհը զիջի

1. միայն հետիոտներին:
2. դրանով երթևեկող տրանսպորտային միջոցներին:
3. երթևեկող տրանսպորտային միջոցներին և չստեղծի խոչընդոտ հետիոտների համար:

Պատ.՝ 3

---

100. Հետադարձ կատարել նշանից հետո թույլատրվում է



1. Միայն երկու կողմից 100 մետր տեսանելիության դեպքում:
2. Խոչընդոտ չստեղծելու դեպքում:
3. Ոչ մի դեպքում:

Պատ.՝ 3

---

101. Ազդանշան տալը երթևեկության մյուս մասնակիցների նկատմամբ առավելություն

1. Տալիս է:
2. Տալիս է միայն վերադասավորվելիս:
3. Չի տալիս:

Պատ.՝ 3

---

102. Նշված հետագծով աջ շրջադարձը



1. Թույլատրված է:
2. Արգելված է:

Պատ.՝ 1

103. Բեռնատարից առաջ անցնելուց հետո ո՞ր գոտով է թույլատրվում շարունակել երթևեկությունը:



1. Միայն աջ
2. Երկու համընթաց գոտիներով էլ թույլատրվում է

Պատ.՝ 1

104. Հետադարձը նշված վայրում



1. Թույլատրվում է:
2. Թույլատրվում է, եթե առկա չեն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներ:
3. Արգելվում է:

Պատ.՝ 3

105. Եթե երկու կողմից 100 մետր տեսանելիությունն ապահովված է, թույլատրվու՞մ է նշված հետագծով հետադարձ կատարել:



1. Ոչ
2. Այո

Պատ.՝ 1

106. Աջ շրջադարձ կատարելով բակ մուտք գործելու դեպքում՝ պարտավոր ենք զիջել



1. Միայն հետիոտներին:
2. Միայն հեծանվորդին:
3. Ոչ մեկին:
4. Հեծանվորդին և հետիոտներին:

Պատ.՝ 4

107. Այս վերելքի ուղղությամբ շարժվելիս հետադարձը



1. Թույլատրվում է, եթե հնարավոր լինի այն կատարել մեկ գործողությամբ:
2. Թույլատրվում է, եթե ապահովված է 100 մետր տեսանելիությունը՝ երկու կողմից:
3. Չի թույլատրվում:

Պատ.՝ 2

108. Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդը պետք է զիջի ճանապարհը:



1. Ավտոբուսի վարորդը
2. Թեթև մարդատարի վարորդը

Պատ.՝ 1

---

109. Թույլատրվու՞մ է հետադարձն այս վայրում:



1. Թույլատրվում է՝ երկու կողմից 100մ տեսանելիության պայմաններում
2. Արգելվում է

Պատ.՝ 1

---

110. Թույլատրվո՞ւմ է անցնել կամուրջը, եթե դա չի խոչընդոտում մոտոցիկլի վարորդին:




1. Այո
2. Ոչ

Պատ.՝ 1

---

111. Ո՞ր նշաններն են բնակավայրից դուրս կրկնվում:




1. 1 և 2
2. 2 և 3
3. **1 և 5**
4. 3 և6
5. 5 և 6

Պատ.՝ 3

---

112. Ո՞ր նշաններն են բնակավայրից դուրս կրկնվում:



1. 1 և 3
2. 2 և4
3. **4 և 6**
4. 3 և 4
5. 1 և 6

Պատ.՝ 3

---

113. Ո՞ր նշաններն են բնակավայրից դուրս կրկնվում:




1. 2 և 3
2. 1 և 4
3. 4 և 5
4. 3 և 6
5. 3 և 5

Պատ.՝ 1

---

114. Նշաններից որո՞նք են տեղադրվում ճանապարհի միայն ձախ կողմում:




1. 1 և 2
2. 3 և 4
3. 1 և 3
4. 2 և 4

Պատ.՝ 3

---

115. Ո՞ր նշանի ազդեցությունը չի տարածվում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա:




1. 1
2. 2
3. 3
4. **4**
5. 5

Պատ.՝ 4

---

116. Ո՞ր նշանի ազդեցությունը չի տարածվում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա:



1. 1
2. 2
3. 3
4. **4**
5. 5

Պատ.՝ 4

---

117. Ո՞ր նշանի ազդեցությունը չի տարածվում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա:




1. 1
2. 2
3. **3**
4. 4
5. 5

Պատ.՝ 3

---

118. Ո՞ր նշանի ազդեցությունը չի տարածվում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա:




1. 1
2. 2
3. 3
4. **4**
5. 5

Պատ.՝ 4

---

119. Ո՞ր նշանի ազդեցությունը չի տարածվում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա:



1. 1
2. 2
3. 3
4. 4
5. **5**

Պատ.՝ 5

---

120. Ի՞նչ են տեղեկացնում նախազգուշացնող նշանները:

1. **Ճանապարհի այն վտանգավոր տեղամասին մոտենալու մասին, որով երթևեկելիս (տեղաշարժվելիս) անհրաժեշտ է ձեռնարկել իրադրությանը համապատասխան միջոցներ**
2. Ճանապարհի այն վտանգավոր տեղամասին մոտենալու մասին, որով երթևեկելիս (տեղաշարժվելիս) անհրաժեշտ է պարտադիր իջեցնել արագությունը:

Պատ.՝ 1

---

121. Ի՞նչ են սահմանում առավելության նշանները:

1. Խաչմերուկներով, երթևեկելի մասերի փոխհատումներով կամ ճանապարհների նեղ հատվածներով անցման որոշակի ռեժիմները:
2. **Խաչմերուկներով, երթևեկելի մասերի փոխհատումներով կամ ճանապարհների նեղ հատվածներով անցման հերթականությունը:**

Պատ.՝ 2

---

122. Ի՞նչ են մտցնում կամ վերացնում արգելող նշանները:

1. Երթևեկության որոշակի ռեժիմներ:
2. **Երթևեկության որոշակի սահմանափակումներ:**

Պատ.՝ 2

---

123. **Հնարավո՞ր է նվազեցնել «Առավելագույն արագության սահմանափակում» նշանի ազդման գոտին՝ տեղադրելով նույն խմբի նշան:**



1. **Այո՝ տեղադրելով այդ նույն նշանը այլ ցուցանիշով (թվանշանով)**
2. Ոչ, արգելող նշանների ազդման գոտին կարող է չեղարկվել միայն խաչմերուկով կամ բնակավայրի ավարտով

Պատ.՝ 1

---

124. **Թույլատրվու՞մ է ավտոբուսների երթևեկությունը «Ճանապարհ ավտոմոբիլների համար» նշանով կահավորված ճանապարհներին:**



1. **Այո, թույլատրվում է առանց որևէ սահմանափակման:**
2. Ոչ, այդ ճանապարհները նախատեսված են միայն թեթև մարդատար ավտոմոբիլների համար:
3. Թույլատրվում է, սակայն նրանք չպետք է զբաղեցնեն երկրորդ գոտուց ձախ գտնվող այլ գոտի:

Պատ.՝ 1

---

125. **Թույլատրվու՞մ է ավտոբուսների երթևեկությունը «Ճանապարհի ավտոմոբիլների համար» նշանով կահավորված ճանապարհներին:**



1. Թույլատրվում է, սակայն նրանք չպետք է զբաղեցնեն ձախ եզրային գոտին
2. **Թույլատրվում է՝ առանց որևէ սահմանափակումների**

Պատ.՝ 2

---

126. **Թույլատրվու՞մ է ուղևոր նստեցնելու նպատակով ավտոբուսների հետընթաց երթևեկությունը «Ճանապարհի ավտոմոբիլների համար» նշանով կահավորված ճանապարհներին:**



1. Այո, եթե դա չի խոչընդոտում երթևեկության այլ մասնակիցներին
2. Թույլատրվում է միայն վթարային լուսային ազդանշանը միացրած վիճակում
3. **Արգելվում է**

Պատ.՝ 3

---

127. **Թույլատրվու՞մ է ավտոբուսի հետադարձը և մուտքը բաժանարար գոտու տեխնոլոգիական խզվածքներ «Ճանապարհի ավտոմոբիլների համար» նշանով կահավորված ճանապարհներին:**




1. Թույլատրվում է
2. **Արգելվում է**
3. Թույլատրվում է, եթե ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոց է

Պատ.՝ 2

---

128. **Թույլատրվու՞մ է արդյոք ավտոբուսի վարորդին երթևեկել այս նշանով նշված գոտիով, եթե այդ գոտին մնացած երթևեկելի մասից բաժանված է գծանշման հոծ գծով:**




1. Թույլատրվում է երեխաների խմբերի կազմակերպված փոխադրում իրականացնող ավտոբուսի վարորդին
2. Արգելվում է
3. **Թույլատրվում է, եթե ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոց է**

Պատ.՝ 3

---

129. Ո՞ր նշանն է կոչվում «Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտիով ճանապարհ»:




1 2

1. 1
2. 2

Պատ.՝ 2

130. Նշաններից ո՞րն է կոչվում «Ելք դեպի ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտիով ճանապարհ»:




1 2

1. 1
2. 2

Պատ.՝ 2

131. Նշաններից ո՞րն է կոչվում «Դարձափոխային երթևեկություն»:



1. 1
2. 2
3. 1 և 2

Պատ.՝ 1

---

132. Ո՞ր դեպքում է ավտոբուսի վարորդին թույլատրվում օգտվել այս նշանով նախատեսված կապի միջոցից:



1. Ճանապարհի տվյալ հատվածում եղանակային պայմանների մասին տեղեկություններ ստանալու համար
2. Օպերատիվ ծառայությունների հետ կապ հաստատելու համար

Պատ.՝ 2

---

133. **Ո՞ր դեպքում է արգելվում ավտոբուսի երթևեկությունն այս նշանի առկայության դեպքում:**



1. **Եթե ավտոբուսի փաստացի զանգվածը մեծ է նշանի վրա նշվածից**
2. Եթե ավտոբուսի թույլատրելի առավելագույն զանգվածը մեծ է նշանի վրա նշվածից

Պատ.՝ 1

---

134. **Ավտոբուսի թույլատրելի առավելագույն զանգվածը 8 տոննա է, սակայն ուղևորների բացակայության պատճառով նրա փաստացի զանգվածը 6 տոննա է: Թույլատրվու՞մ է նրան երթևեկել այս նշանի առկայությամբ:**



1. Ոչ, քանի որ հիմք է ընդունվում հաշվառման վկայագրում նշված առավելագույն զանգվածը
2. **Այո, քանի որ փաստացի զանգվածը չի գերազանցում նշանում նշված թիվը**
3. Այո, եթե վարորդը միացրել է վթարային լուսային ազդանշանը

Պատ.՝ 2

---

135. Թույլատրվու՞մ է ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցի երթևեկությունն այս նշանի առկայությամբ, եթե նրա ընդհանուր փաստացի զանգվածը 7 տոննա է:



1. Թույլատրվում է
2. Չի թույլատրվում

Պատ.՝ 1

---

136. Թույլատրվու՞մ է ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցի երթևեկությունն այս նշանի առկայությամբ, եթե նրա թույլատրելի առավելագույն զանգվածը 9 տոննա է, սակայն ուղևորներ չլինելու պատճառով նրա փաստացի զանգվածը 7 տոննա է:



1. Թույլատրվում է
2. Չի թույլատրվում

Պատ.՝ 1

---

137. Ավտոբուսի վարորդը տեսնում է այս նշանը նախքան կամուրջ հասնելը: Ավտոբուսի փաստացի զանգվածը 12 տոննա է: Կարո՞ղ է նա անցնել կամուրջը:



1. Այո
2. **Ոչ**

Պատ.՝ 2

---

138. Ավտոբուսի վարորդը դադարեցրել է երթևեկությունն այս նշանին հանդիպելիս: Ե՞րբ է թույլատրվում շարունակել երթևեկությունը:



1. **Թույլտվություն ստանալուց հետո**
2. Վտանգի պատճառը վերացնելուց հետո

Պատ.՝ 1

---

139. Թույլատրվու՞մ է հատել այս գծանշումը:



1. 2 գծանշում

1. Չի թույլատրվում
2. **Թույլատրվում է հատել կողնակի վրա կանգառ կատարելու և կանգառի վայրից դուրս գալու դեպքում, այն տեղերում, որտեղ թույլատրվում է տրանսպորտային միջոցների կանգառը կամ կայանումը**

Պատ.՝ 2

---


140. Ավտոբուսի վարորդը դուրս է գալիս ամբողջ պարագծով պարփակված բնակելի շենքերի տարածքից (բակից), որտեղ բացակայում է «Բնակելի գոտի» նշանը: Պարտավո՞ր է նա զիջել ճանապարհով ընթացող այլ տրանսպորտային միջոցներին:

1. **Պարտավոր է**
2. Պարտավոր չէ, քանի որ <<Բնակելի գոտի>> նշանի բացակայության դեպքում տվյալ տարածքից դուրս եկող ճանապարհը համարվում է հավասարազոր

Պատ.՝ 1

---

141. Ո՞ր ճանապարհային նշանների ազդեցությունն է տարածվում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա:



1. 1, 3,4
2. 2,3, 4
3. **1, 2, 3**

Պատ.՝ 3

---

142. Այս նշանի ազդեցությունը չի տարածվում




1. Միայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա:
2. Բոլոր ավտոբուսների վարորդների վրա:
3. Միայն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների և տաքսիների վրա:

Պատ.՝ 1

---

143. Ո՞ր նշանի ազդեցությունը չի տարածվում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա:



1. Միայն A
2. Միայն B
3. Միայն C
4. Բոլորը

Պատ.՝ 4

---

144. **Թույլատրվու՞մ է հատել տրանսպորտային հոսքերը բաժանող հոծ գիծը՝ հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալով:**



1. 1 գծանշում

1. Թույլատրվում է բնակավայրից դուրս գտնվող ճանապարհներին նախ շրջադարձ կամ հետադարձ կատարելու նպատակով
2. **Արգելվում է**
3. Թույլատրվում է միայն լուսավորված ճանապարհահատվածներում և օրվա լուսավոր ժամերին

Պատ.՝ 2

---

145. **Այս նշանը ինչի՞ մասին է նախազգուշացնում:**



1. Տրոլեյբուսի և տրամվայների կանգառի կետին մոտենալու մասին
2. Ընդհանուր օգտագործման ավտոբուսների առանձնացված գոտուն մոտենալու մասին
3. **Տրամվային գծերի հետ հատման մասին**

Պատ.՝ 3

---

146. **Բնակելի գոտում և բակային տարածքներում արգելվում է**

1. Ավտոբուսների միջանցիկ երթևեկությունը:
2. Ավտոբուսների կայանելը աշխատող շարժիչով:
3. Ուսումնական վարումը:
4. **Թվարկված բոլոր դեպքերում:**

Պատ.՝ 4

---

147. Օգտագործվու՞մ է այս գծանշումը տրանսպորտային միջոցների կայանման տեղերի սահմանները նշելու համար:



1. 1 գծանշում

1. Այո
2. Ոչ

Պատ.՝ 1

---

148. Ի՞նչ է նշում այս գծանշումը:




1. 1 գծանշում

1. Ճանապարհի վտանգավոր վայրերում երթևեկության գոտիների սահմանները
2. Միևնույն ուղղությամբ երթևեկության բոլոր գոտիների բաժանման գծերը

Պատ.՝ 1

---

149. Այս նշաններից որի՞ ազդեցությունը չի տարածվում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա:




1. 1 և 3
2. 2 և 3
3. **Ոչ մեկի**

Պատ.՝ 3

---

150. Այս նշաններից որի՞ ազդեցությունը չի տարածվում ընդհանուր օգտագործման ավտոբուսների վրա:



1. **Ոչ մեկի**
2. 2 և 3
3. 1 և 3

Պատ.՝ 1

---

151. Այս նշաններից ո՞րի ազդեցությունն է տարածվում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վրա:



1 2 3

1. 1
2. 2
3. **3**
4. Բոլորի

Պատ.՝ 3

---

152. Ի՞նչ է ցույց տալիս այս գծանշումը:



1. 2 գծանշում

1. Հակադիր ուղղություններով երթևեկության գոտիների սահմանը
2. **Երթևեկելի մասի և բաժանարար գոտու եզրը**

Պատ.՝ 2

---

153. Ի՞նչ է բաժանում այս հորիզոնական գծանշումը:




1.3 գծանշում

1. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների գոտին երթևեկելի մասի մնացած գոտիներից
2. **Չորս և ավելի երթևեկության գոտի ունեցող ճանապարհներին բաժանում է հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը**

Պատ.՝ 2

---

154. Ի՞նչ է ցույց տալիս այս դեղին հոծ գիծը:




1.4 գծանշում

1. Էլեկտրամոբիլների և հիբրիդային ավտոմեքենաների համար նախատեսված հատուկ անվճար կայանատեղի սահմանները
2. **Այն վայրը, որտեղ արգելվում է տրանսպորտային միջոցների կանգառը և կայանումը**

Պատ.՝ 2

---

155. Ի՞նչ է բաժանում այս գիծը:




1.5 գծանշում

1. **Երկու կամ երեք երթևեկության գոտի ունեցող ճանապարհների հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը (առանցքային գիծ), իսկ մեկ ուղղությամբ երկու և ավելի երթևեկության գոտի ունեցող ճանապարհներին ցույց է տալիս երթևեկության գոտիների սահմանները**
2. Բաժանում է միակողմանի երթևեկությամբ ճանապարհի երթևեկելի մասը կողնակից

Պատ.՝ 1

---

156. Ի՞նչ է ցույց տալիս այս ընդհատվող գիծը (գծիկների երկարությունը և դրանց միջև ընկած տարածությունն հավասար են):




1.7 գծանշում

1. Երթևեկելի մասի հիմնական և թափառքի կամ արգելակման գոտիների միջև առկա սահմանը
2. **Ցույց է տալիս երթևեկության գոտիները խաչմերուկի սահմաններում**

Պատ.՝ 2

---

157. Ի՞նչ է ցույց տալիս հոծ և ընդհատվող գծերի համակցությունը:




1.11 գծանշում

1. Հետադարձի, ինչպես նաև մերձակա տարածքների մուտքի, ելքի և նման տեղերը, որտեղ երթևեկությունը թույլատրվում է միայն մեկ ուղղությամբ
2. Տարբեր ուղղությունների տրանսպորտային հոսքեր միացման տեղը

Պատ.՝ 1

---

158. Հոծ և ընդհատվող գծերի համակցությունը թույլատրվու՞մ է հատել հոծ գծի կողմից:



1.11 գծանշում

1. Չի թույլատրվում
2. Թույլատրվում է՝ վազանցը կամ շրջանցումը ավարտելիս

Պատ.՝ 2

---

159. **Տվյալ նշանի ազդման գոտում արգելվում է այն ավտոբուսների երթևեկությունը, որոնց**




1. Փաստացի զանգվածը 8 տ է:
2. **Առնու վրա բեռնվածությունը մեծ է նշանի վրա նշվածից:**
3. Թույլատրելի առավելագույն զանգվածը 8 տ է:

Պատ.՝ 2

---

160. **Այս նշաններից ո՞ր նշանի ազդեցությունը չի տարածվում ընդհանուր օգտագործման ավտոբուսների վրա:**




1. 1 և 4
2. 2 և 4
3. 3 և 5
4. **1 և 2**
5. միայն 2

Պատ.՝ 4

---

161. Այս նշաններից որ՞ն իր ազդեցությունը չի տարածում I և II խմբի հաշմանդամություն, կամ խորը և ծանր աստիճանի ֆունկցիոնալության սահմանափակում ունեցող անձանց կողմից ղեկավարվող կամ այդպիսի հաշմանդամություն ունեցող անձի կամ հաշմանդամություն ունեցող երեխայի կարգավիճակ ունեցող երեխա փոխադրող տրանսպորտային միջոցների վրա:



1. 2 և 3
2. 4 և 1
3. **1 և 5**
4. 5 և 2

Պատ.՝ 3


162. Այս նշանների դեպքում միայն ուղիղ թույլատրվում է երթևեկել



1. Բոլոր տրանսպորտային միջոցներին:
2. Տրոլեյբուսներին:
3. **Ավտոբուսներին:**

Պատ.՝ 3

163. Այս նշանների դեպքում ո՞ր տրանսպորտային միջոցին է արգելվում աջ շրջադարձը:




1. **Զբոսաշրջային ավտոբուսներին**
2. Տրոլեյբուսներին
3. Ընդհանուր օգտագործման ավտոբուսներին

Պատ.՝ 1

---

164. Թույլատրվու՞մ է հատել ընդհատվող (դարձափոխային) գծանշումը, եթե միացված է դարձափոխային լուսացույցը:



1.9 գծանշում

1. Չի թույլատրվում
2. **Թույլատրվում է, ցանկացած կողմից, եթե այդ գիծը բաժանում է երթևեկության համընթաց ուղղությամբ գոտիները:**

Պատ.՝ 2
